



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻՆ 20 ՄԼՆ ԴՈՒԱՐ ՎԱՐԿ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ-Ն ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

09.06.2015



ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամը (OPEC Fund for International Development (OFID)) և Ամերիաբանկը ստորագրել են պայմանագիր՝ 20 մլն ԱՄՆ դոլարի չափով Ամերիաբանկին վարկ տրամադրելու մասին, հայտնում է բանկի մամուլի ծառայությունը:

Վարկը տրամադրվում է 7 տարի ժամկետով և ուղղվելու է Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, որոնք ապահովում են երկրի համախառն ներքին արդյունքի 35-40%-ը:

Նման ծավալի միանվագ ֆինանսավորմամբ OFID-ն առաջին անգամ է հանդես գալիս Հայաստանում:

«Ամերիաբանկը բարձր է գնահատում OFID-ի հետ նոր գործընկերական հարաբերությունների ստեղծումը», – ասել է Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեայանը:



ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ 9-ԸՂ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ
12.06.2015

«ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում հայտարարվեց ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ արժեկտրոնային պարտատոմսերի 9-րդ թողարկման մասին: Բանկի գործադիր տնօրենի տեղակալ Դավիթ Հարությունյանը, ներկայացնելով պարտատոմսերի նախորդ թողարկումների արդյունքները, նշեց, որ



ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ արժեթղթերի շուկայի ամենաակտիվ մասնակիցներից է, և հաշվի առնելով նախորդ թողարկումների ժամանակ դրսևորված պահանջարկը՝ այս անգամ ևս առաջարկում է դոլարային պարտատոմսեր: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով 2014թ-ին կատարվել են շուրջ 188 գործարք 500 մլն դրամ ծավալով:

Բանկի գործադիր տնօրենի տեղակալն, անդրադառնալով նոր պարտատոմսերի թողարկմանը, նշեց, որ թողարկվել է 80.000 անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 7,25 տոկոս տարեկան տոկոսադրույքով և 3 տարի շրջանառության ժամկետով: Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվել է հունիսի 15-ից մինչև հունիսի 26-ը՝ բաժանորդագրության միջոցով:



FITCH-Ը ՎԱՐԿԱՆԻՇ Է ՇՆՈՐՀԵԼ ԱՐԴՉԻՆԲԱՆԿԻՆ

18.06.2015



Fitch միջազգային վարկանշային գործակալությունն «Արդշինբանկ» ՓԲԸ-ին շնորհել է արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի (Long-term Issuer Default Rating (IDR)) «B+» վարկանիշ՝ բացասական հեռանկարով:

«Բանկին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վարկանշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է»,- ասված է Արդշինբանկի տարածած հաղորդագրությունում:

Բանկում նաև նշել են, որ Արդշինբանկը Հայաստանի միակ մասնավոր կառույցն է, որն ունի միջազգային հեղինակավոր վարկանշային երկու գործակալություններից (Moody’s և Fitch) ստացված վարկանիշ:



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿՆ ԱՍՓՈՓԵԼ Է 2014Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

19.06.2015



Կայացել է Հայէկոնոմբանկի բաժնետերերի տարեկան ժողովը, որի ընթացքում ամփոփվել են 2014թ. գործունեության արդյունքները:

Ինչպես հայտնել են Հայէկոնոմբանկում, «2014-ը բանկի համար նշանավորվել է կարևոր ձեռքբերումներով, որակական դրական տեղաշարժերով և միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության խորացմամբ»:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում բանկին շնորհվել է «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

Ինչպես իր ելույթում նշեց Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը, «Հայէկոնոմբանկը» Հայաստանի Հանրապետության հնագույն բանկերից մեկն է, անկախ Հայաստանի ձևավորվող բանկային համակարգի առաջնեկներից: Բոլորս հիշում ենք, որ «Հայէկոնոմբանկն» առաջինն էր Հայաստանի Հանրապետության պետական բանկերից, որը վերակազմակերպվեց բաժնետիրական ընկերության և ստացավ Կենտրոնական բանկի համար 1 լիցենզիա: Այսօր բանկը համակարգում զբաղեցնում է իր ուրույն տեղը, իր «լուսնան» ներդնելով ֆինանսական համակարգի կայունության և ռիսկերի կառավարելիության գործում:

- Բանկի հիմնական բաժնետերերի, Սուքիասյան ընտանիքի անդամների քրտնաջան և շարունակական աշխատանքի արդյունքում «Հայէկոնոմբանկը» գրավիչ է դարձել միջազգային հեղինակավոր կառույցների համար, և այսօր ունի այնպիսի ինստիտուցիոնալ բաժնետեր, ինչպիսին EBRD-ն է, որը դեռ ավելի քան 10 տարի առաջ ընդգրկվեց բանկի բաժնետերերի կազմում, և AEB-ը նորից առաջինն էր այդ առումով հայաստանյան բանկերից, - նշեց իր խոսքում ՀԲՄ-ի ղեկավարը:

Որպես Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ «Հայէկոնոմբանկը» միշտ ակտիվ մասնակցություն է ունեցել ՀԲՄ-ի շրջանակում նախաձեռնվող աշխատանքներում, որոնք ուղղված են համակարգային խնդիրների լուծմանն ու դաշտը բանկերի գործունեության համար բարելավելուն:

Սամվել Ճզմաչյանը հիշել է, թե ինչպես են Սուբիասյանները 1990-ական թվականներին մտադրվել ստեղծել նոր բանկ «Ժողովրդական» անվանումով: «Այսօր Հայէկոնոմբանկը սպասարկում է հանրապետության բնակչության 20-25 տոկոսին և իրավամբ ժողովրդական եզրույթը միանգամայն կիրառելի է նրա հանդեպ»,- նշեց ՀԲՄ-ի նախագահը:

Ժողովի ավարտին հաջորդել է Հայէկոնոմբանկի խորհրդի նիստը, որի ընթացքում խորհրդի նախագահ է վերընտրվել Սարիբեկ Սուբիասյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՆԻ HSBCNET ՄՈՒԲԱՅԼ ԲԱՆԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՄԵՆԱԲԱՐՁԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ**

19.06.2015



2014թ. վերջին HSBCnet Մոբայլ Բանկ ծրագրի մեկնարկից ի վեր Հայաստանի կորպորատիվ հաճախորդները HSBCnet-ի միջոցով իրականացրել են ավելի քան \$12 մլն-ի վճարումներ: Միայն 2015թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են ավելի քան 1400 մոբայլ վճարումներ, որոնց ընդհանուր արժողությունը կազմել է \$7.6 մլն:

HSBCnet Մոբայլ Բանկը բիզնեսի համար ստեղծված մոբայլ հարթակ և հավելված է, որը կազմակերպությունների գանձապահներին ու ղեկավարներին թույլ է տալիս ստուգել հաշիվների մնացորդները, վճարումներ հաստատել և ստանալ վճարման ծանուցումներ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ ԱՄՓՈՓԵՑ 2014Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

26.06.2015



«Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի է ունեցել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ժողովը: Ամփոփելով բանկի անցած՝ 2014թ-ի գործունեության արդյունքները՝ ժողովը հաստատել է բանկի գործադիր մարմնի տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվետվությունները և շահույթի բաշխումը հաշվետու տարվա արդյունքներով:

Շարունակելով պահպանել իր դիրքերը Հայաստանի առաջատար բանկերի շարքում, 2014թ-ին ևս ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻՆ հաջողվել է կատարել բանկի հեռանկարային զարգացման ծրագրով առաջադրված այնպիսի հիմնական ցուցանիշներ, ինչպիսիք են շահույթը, ակտիվների և կապիտալի եկամտաբերությունն արտահայտող գործակիցները:

2014թ-ին բանկն արձանագրել է նաև մի շարք կարևոր իրադարձություններ: NASDAQ OMX ARMENIA բորսայի կազմակերպած ամենամյա մրցանակաբաշխությանն ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ երկրորդ տարին անընդմեջ հաղթող է ճանաչվել միանգամից երեք անվանակարգերում՝ Բորսայի լավագույն մասնակից պետական պարտատոմսերի շուկայում, Բորսայի լավագույն անդամ վարկային ռեսուրսների շուկայում և Բորսայի լավագույն անդամ բոլոր հարթակներում ակտիվ գործունեության համար: Հավելենք նաև, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից Միջազգային առևտրի խթանման ծրագրի (TFP) շրջանակում ճանաչվեց «2014թ-ի ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում»:

- Արարատբանկն իր քառորդարյա պատմության ընթացքում միշտ աչքի է ընկել առաջադիմությամբ, նորարարական մոտեցումներով և բազմաթիվ բաժնետերերի շահերի անշեղորեն հետապնդումով: Օրինակ, առաջինն էր Հայաստանում, որ դեռևս 2007թ-ին, որպես ֆինանսական նոր գործիք, թողարկել էր կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր: Եվ այդ պահից անցած բոլոր տարիներին միշտ եղել է արժեթղթերի շուկայի ամենաակտիվ մասնակիցներից, այս ամիս իրականացնելով իր պարտատոմսերի արդեն 9-րդ թողարկումը, - նշեց իր ելույթում ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանը:

«Արարատբանկը նաև առաջիններից էր, որ վերակազմավորվեց բաց բաժնետիրական ընկերության, ճանապարհ բացելով ինստիտուցիոնալ, ռազմավարական կառույցների առջև բաժնետերերի կազմում ընդգրկվելու համար: Հիշում եմ, որ հարգարժան Բարսեղ Բեգլարյանը բաժնետոմսերի մի մասի վաճառքի վերաբերյալ պայմանագրի ստորագրմանը հաջորդող պահին կես կատակ, կես լուրջ ակնարկեց՝ «Գիտե՞ք հեշտ է սեփականությունից ինքնական հրաժարվելը», բայց բանկի զարգացման, բոլոր բաժնետերերի շահերը պահանջում էին գնալ դրան»,- շարունակեց իր խոսքը Սամվել Ճզմաչյանը:

- Բոլոր բաժնետերերը պետք է որ գոհ լինեն Արարատբանկի անցյալ տարվա գործունեությունից, երբ բավականին բարդ պայմաններում բանկի գործադիր մարմինը ի դեմս Աշոտ Օսիպյանի կարողացել է ապահովել հիմնական ցուցանիշների երկնիշ աճ, ինչպես նաև ստանալ պատկառելի գուտ շահույթ, որը մոտեցել է 3 մլրդ դրամի, - նշեց ՀԲՄ-ի նախագահը:

**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ԴՈՒԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՏԵՐԻ ԵՐԵՔ ԹՈՂԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ՍԱՐԿԵՏՄԵՅՔԵՐՆ Է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

30.06.2015



«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ առաջնային կորպորատիվ արժեկտրոնային դոլարային պարտատոմսերի երեք թողարկումների (բորսայական SWISB1, SWISB2, SWISB3 հապավումներով) մարկետմեյքերն է «Արմենբրոկ» ընկերությունը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԻ դոլարային պարտատոմսերի ստեղծողի

կարգավիճակում հանդես գալն Արմենբրոկ ընկերությանը թույլ կտա մշտապես իրականացնել ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի երկկողմանի գնանշումներ «Նասդաք Օեմէքս Արմենիա» ԲԲԸ հարթակում՝ նպաստելով երկրորդային շուկայում վերջիններիս իրացվելիության բարձրացմանը:

ՈւրղՈւՄ. UBA Newsletter-ի նախորդ՝ 15 համարում, տպագրված էր «Արմավիսբանկի արտարժույթային պարտատոմսերը» վերնագրով հաղորդագրություն: Ոչ Newsletter-ի մեղքով, տեղի է ունեցել անճշտություն պարտատոմսերի 1-ին թողարկման մարման ժամկետն է 3 տարի, ոչ թե 2:

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐ

03.07.2015



«Առեկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը համալրվեց 4 703 150 400 ՀՀ դրամով կամ 10 մլն ԱՄՆ դոլարով: Տվյալ որոշումն ընդունվել է 2015թ. հունիսի 30-ին կայացած «Առեկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի արտահերթ նիստում:

Կանոնադրական կապիտալը համալրվելու է բանկի միակ բաժնետեր՝ ռուսաստանյան «Գազպրոմբանկ» ԲԲԸ կողմից թվով 90 400 հասարակ (սովորական) լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:

Այսպիսով, բանկի փաստացի ձևավորված կանոնադրական կապիտալը կկազմի 30 590 871 792 ՀՀ դրամ կամ շուրջ 65 մլն ԱՄՆ դոլար (ըստ 03.07.15թ. հրապարակված ՀՀ ԿԲ փոխարժեքի): Տվյալ ցուցանիշի առումով բանկը հնարավորություն կունենա զբաղեցնել առաջատար դիրքերից մեկը ՀՀ բանկային համակարգում:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ EUROMONEY-Ի ԿՈՂՄԻՑ ՃԱՆԱԶՎԵԼ Է «ՏԱՐՎԱ
ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿ»

10.07.2015



Արդշինբանկը Լոնդոնում Euromoney ամսագրի կողմից ճանաչվել է Հայաստանի 2015թ. «Տարվա լավագույն բանկ»:

«Միջազգային ֆինանսական հեղինակավոր կառույցները բարձր են գնահատում ՀՀ բանկային համակարգում Արդշինբանկի առաջատար դիրքերը՝ հատկապես հաշվի առնելով, որ բանկն էապես ավելացրել է շուկայի իր մասնաբաժինը: Արդշինբանկը նաև Հայաստանում առաջին մասնավոր ընկերությունն է, որ միջազգային կապիտալի շուկաներում թողարկել է պարտատոմսեր»,- ասված է բանկի տարածած հաղորդագրությունում:

Բանկում նշել են, որ «Տարվա լավագույն բանկ» տիտղոսի նվաճումը եղել է «շնորհիվ բանկի հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ և արդյունավետ համագործակցության»:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԴԱՐՁԵԼ Է ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

14.07.2015



ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) հունիսի 23-ի որոշման համաձայն, «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվել է «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության:

Այս մասին հաղորդում է ԿԲ մամուլի ծառայությունը:

Յունիբանկում, իրենց հերթին, նշել են, որ բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորվելու որոշումը բանկի բաժնետիրոջ ընդհանուր արտահերթ ժողովը կայացրել էր այս տարվա մարտի 12-ին:

«Բաց բաժնետիրական ընկերություն դառնալու որոշումը պայմանավորված է Յունիբանկի՝ զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և միջազգային շուկա մուտք գործելու ռազմավարությամբ: Այն

համապատասխանում է համաշխարհային տնտեսության միտումներին և կնպաստի բանկի աշխատանքի թափանցիկության և կորպորատիվ կառավարման մակարդակի բարձրացմանը»,- ասված է բանկի հաղորդագրությունում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: